

## Հ Ա Յ Է Ջ Ե Ր

## ՏԱՂ ՍԻՐՈՅ

(ՅՈՒՂԱՆՆԵՍ ԹՈՒԼՎՈՐԻՍՆՅՈՒՆ)

Հիմնկարծախի մէկ մի տեսայ որ կու ցօգայր զոյնն երեսէն .  
 Թայցայ անկայ ի տեսնենէն՝ շողայր կաթէր լոյսն ի վըզէն .  
 Աչքերն է ծով, ունքն է թուխ ամպ , մազն է դեղձան ոսկի թելէն .  
 Ջինքըն ճօհար՝ զէտ զուռի ճեղ՝ ճըլով ալրէր զերկիր ամէն :  
 Ճոխադրնաց մանրաքալով . հոգիքն ի մարմնէ քակող ,  
 Լուծիքն է ծածկեր զամէն աշխարհս , շարար կաթէր իւր քորամէն :  
 Երբ իմ աշերս ի քեզ դիպու , նայ վառեցայ զեւ մոմեղէն ,  
 Խելագրնաց ի վայր մնացի , զարհուրեցայ ի տեսնենէն :

Խել Երվանէն Թուլկուրանցի , խիտ մի՛ հաներ զոտքդ ի ճըրէն .

Աղէկ ուրաթն երբ մեռանի , ցածքի զընայ զոյնն երեսէն :

Էջմիածնայ ձեռ. քիւ 1999 (Տաղարան) .

## Ք Ր Ո Ն Ի Կ

Մատ գէշ ճգնաժամ մըն է որ կ'անցընեն այս պահուս մեր ժողովուրդը : Աւելի գէշ քան կալիցիւնի կամ՝ Լամիտի օրերուն իր անցեցած ահաւոր ճգնաժամները : Այդ հին ժանտ օրերուն՝ թշնամին զրօնէն էր , Հայը կ'երևար զոհ մը , որ կը տառապի բայց կը դիմադրէ , համակրելի ամէն կերպով . պատիւը անկող , ապագան յուսալից՝ մութ ներկայի մը մէջէն : Այսօր՝ քառօրի մը մը կը տապալկի որուն միակ ստեղծողը ինքն է : Եւ ասիկա ահաւելի , ամօթալի , յուսահատեցողիչ բան մըն է : Եւ միշտ ջերմ ցանկացող եղած եմ որ մեր լեզուն տարածուի , ծանօթ ու սիրելի դառնայ օտարներուն : Բայց այս միջոցին՝ գրեթէ բարերբաստիկ կը համարիմ՝ զմեզ , որ օտարները չեն գիտեր հայերէն : Ի՞նչ պիտի մտածէին մեր մասին՝ եթէ կարդային այս պահուս Պոլսոյ կամ Թիֆլիսի թերթերը և մեր ներքին կենսութեան ճանաչային իր ամբողջ ցաւապարտութեամբ ... Ի՞նչ պիտի մտածէին :

Մենք միշտ պարծնեցած ենք թէ իրաւունքի նախանձանդիւր , արդարութեան ախոյեան ժո-

ղովուրդ մըն ենք . Ատանայի կոտորածէն յետոյ , մենք զայրոյթի ճիշեր արձակեցինք տեսնելով որ արգարու թիւնը լիակատար կերպով տեղի չէր ունենար՝ յանցաւորները պատժելու գործին մէջ ... Իսկ մե՞նք . — մենք հիմա երեսան կը հանենք զայլմակղու թիւններն աւելի տիրուր , Օրմանեան սրբապանը ամենախայտառակ կերպով կոխտեցին իր հակառակորդները՝ Օսմանական հանապարտութեան հաստատման առաջին օրերուն , զինքը ներկայացուցին իբրեւ Համիտի մեղսակից , մատնիչ , ազգատեսաց . ապա իր արմատները իւրացընող , ևն . ևն : Ան հրատարակեց իր հաշիւները և պահանջեց դատ . ահա երկուք ու կիս տարի է որ կը տեւէ այդ դատավարութիւնը , և դեռ չէ վերջացած , ու Օրմանեան սրբապանի պէս անձնաւորութիւն մը , որ պատրիարքութեան միջոցին ունեցած է թերութիւններ , բայց որ՝ իր ամբողջ կենսութեան ու բովանդակ գործունէութիւնը և իր բազմազան կարողութիւնները ի նկատի ունենալով՝ մեր հոգեւորական պատու ամենէն հզօր և բեզուս գէպքերէն մին է՝ մեր իսկ այս անխիղճ ընթացքով ( և այսպիսի օրերու մէջ ուր մարդու սով ունիւր ) կը մնայ անգործ , առուը փակուած :

15 տարի շարունակ մենք աղաղակեցինք

Եւրոպային թէ հայ ժողովուրդը քաղաքակիրթ տարր մըն է, բարբարոս ուժերէ հաւածուած, ճնշուած, և թէ ազատ բնօրին մը մէջ՝ ան մեծ թուիչ կարող է առնչու և ընդհ. քաղաքակրթութեան մեծ ծառայութիւններ մատուցանել: Այսօր ահա Ցաճկաստանի մէջ կայ բնօրին մը, որ հեռու է կատարեալ ըլլալէ, բայց որ Հայուն թոյլ կուտայ գէթ իր պատրիարքարանին, ազգային ժողովին, իր բոլոր ցեղային հաստատութեանց կանոնաւոր պաշտօնավարութիւնը վերահաստատելու. արդ, պատրիարքարանը և ազգային ժողովը երբեք՝ նոյն իսկ հին բնօրինի ամենէն մնայլ օրերուն՝ չեն ընծայած այնպիսի անիշխանական. արտառոց, թահուրդահային կացութիւն, ինչքան այժմ: Երուսաղէմայ միաբանութիւնը՝ որ շատոնց ի վեր փորձանք դարձած է հայ ժողովրդի գլխուն, նոր բնօրինի մէջ աւելի մեծ գայթակղութիւններ երեւան հանեց, աւելի խայտառակ ըրաւ հայ ազգի պատիւը՝ քան երբ և իցէ: Կովկասի մէջ Կալիցին չկայ հիմա. բայց ի դաշնակցականներու դէմ մասնաւոր հաւածանքէն որ հակահայ բնոյթ չունի, այլ հակաիշխանական ընդհանուր պայքարին մէջ փուլն է միայն. կառավարութիւնը հայ հասարակութեան ներքին խաղաղ բարգաւաճմանը, ցեղային հաստատութեանց զարգացմանը հանդէպ յայտնապէս թողլատու ընթացք ունի. թաւրոն, մամուլ, գրանառութիւն աղատ են. դպրոցներու հիմնադրութիւն, Էջմիածնայ վերանորոգում, Հրատարակչական ընկերութեան վերահաստատում, Արաբեանի արձանի կանգնում, այս բոլորը արտօնուած են: Արդ, Հայերը կ'օգտուին՝ այս պայմաններէն՝ ինչքան որ կարող էին, ցոյց կուտան այդ՝ մեծ թուիչը: Ոչ: Հրատարակչական ընկերութիւնը մէկ ու կէս տարի է որ հիմնուած, և դեռ մէկ փրկը չէ հրատարակած, ու հասարակութիւնը անոր տուած է դեռ միմիայն 350 կամ 400 անգամ, իղձալի թիւ... Արաբեանի արձանը կանգնելու հարկաւոր դրամը գտնելու համար նախաձեռնակներուն հոգին բերանը կուգայ, և դեռ շատ հեռու են... Մեր Հայրապետը վախճանեցաւ, և որպէս թէ մեր Մայր-Աթոռին դարձեալ՝ այսպէս յանկարծական կերպով թափուր մնալը՝ և մանաւանդ այնպիսի անբոլոր ու մեծ դէմքի մը վաղաժամ անհետացումը բա-

ւական չըլլային մեր սիրտը անհուն վշտի մէջ թաղելու համար, ահա այդ մահուան լոյսովը՝ երևան կուգայ Էջմիածնայ միաբանութեան ներքին կուխներէ կազմուած հեռախց, մնայլ պատկերը, — այնքան աւելի մնայլ, տխուր, ու վհատեցուցիչ, որ այդ միաբաններէն ոմանք որոշ յատկութիւններով լեցուն մարդիկ են, հմուտ են, աշխատասէր են, տաղանդաւոր են, բայց «միաբան» չեն, ոչ միայն քրիստոնէական միաբանութեան մը կարգապահութեան, համարաշխութեան և հնազանդութեան ոգին չունին, այլ նոյն իսկ պարզ մարդկային, հայրենասիրական համերաշխութեան զգացումէն զուրկ են: Անհնար է ընդունիլ թէ Հայրապետին մահուան պատճառ եղբի են միաբանները. սրտի հիւանդութիւնը անողոր է, և Հայրապետը քանի որ ունէր այդ՝ հիւանդութիւնը՝ որ (ինչպէս այժմ երևան կ'ըլլէ) բաւական յառաջացած էր, անոր օրերը ուրեմն համրուած էին. զմեզ չցուցնենք աւելի յանցաւոր քան ինչ որ ենք, այդպիսի ահեղ ոճի մը չբարգնէք մեր խղճին վրայ: Բայց եթէ մենք չենք գոյն մեղցնողը, ճիշդ է որ անոր վերջին տարին դառնացնողը, թունաւորողը մենք ենք եղած, մենք՝ հայ ազգը՝ Էջմիածնայ միաբաններուն ձեւին տակ... Աւ վաղը, մեր աւջկ կը կանգնի՝ նոր հայրապետի մը ընտրութեան հարցին հետ, և անկից առաջ՝ սա հարցը. — «Էջմիածնայ մէջ անհրաժեշտ է որ հայ-քրիստոնէայ իսկական միաբանութիւն մը գոյութիւն ունենայ, որոշ օրէնքներով, կարգապահութեամբ, համերաշխութեամբ և հնազանդութեամբ կապուած ներդաշնակուած. — հակառակ դարադային՝ լաւագոյն է հայրապետ մը զրկելու տեղ՝ ջլախտաւորժ մը զրկել հոն: Իսկ Պոլիս, չեմ գիտեր այս պահուս ինչ կամ ո՞վ զրկելու է՝ կազմուած յիմարեան թնձուրը լուծելու համար. — Իրաւաբարձ ոգի մը, երկնաւաք հրեշտակ մը հագիւ կարողանայ մէջէն ելլել: Ամէնքը կարծես կը ջանան կոր կրցածնին ընելու որպէս զի իրերու վիճալը աւելի անլուծելի, աւելի արտառոց դառնայ: Ազատականի և պահպանողականի պայքար է՝ ըսողներ կան. բայց ես ոչ ազատականներ կը տեսնեմ հոտ և ոչ պահպանողականներ, այլ հիւանդ հասարակութիւն մը, որ կեցած տեղը ոտքերը գետինը կը գարնէ, ու

յաճախ ինքզինքը կ'աքացէ այդ երեւոյն բայց երբեք չյառաջացող ողորմելի ոտքերովը... Ամբողջ քառսը սապէս «անիմատ» հարցերէ ծագած է՝ Հոգեւորականները դո՛ւրս ազգային գործերէն. — Կեկեղեցիները դուրս ազգային գործերէն. — Ինկեղեցիները լսարան դարձնել — Սօփան հուսակցական պայքարի սովորական ու պաշտօնական գէնքերէն մին դարձնել — Սօփա զարնողն ու սօփան ուտողը պատրիարքական հոգածութեան ու սիրոյն հաւասարապէս արժանի գաւաթներ համարել... բոլորն ալ նշանները՝ յոգնած, շուարած, ղէկն ու հաւասարակշռութիւնը կորսընցեցած, «նեօրաթմեիթ» հասարակութեան մը...

Ու մինչ այս խառնաշփոթութեան մէջ կ'երերտկան, կը տաղտկին, կամ աւելի ձիշդ՝ սկիւռի նման իրենք իրենց վրայ անընդհատ կը դառնան Պոլսոյ Հայերը, ինչքան խնդիրներ, ցեղին պատիւին կամ շահերուն հետ սերտ կապ ունեցող, կը մնան երեւի վրայ... Գործելու համար նպատաւոր պայմաններ կան ու գործող չկայ... Այս բոլորը արդարեւ յուսահատեցուցիչ է:

\* \*

Բայց ես այս «յուսահատութիւն» բառը չեմ սիրեր: Եւ կացութեան ամբողջ տիրութիւնը մասնաինչ ընելէս յետոյ, ես ինքս կ'ուզեմ որ յուսահատութիւնը վաննէր մենէ հեռու, և ջանաք բժշկել մենք զմեզ: Ես չեմ ընդունիր այս կացութեան մէջ տեսնել, ոմանք նման, մեր ցեղին հոգեւանութեան սովորական ու մշտական պատկերը սկիզբէն ի վեր: Ո՛չ. եթէ մեր ցեղը միշտ այսպէս եղած ըլլար, հարիւր տարի չէր տեսեր ան, և չէր կարող կանգնել ո՛չ մեր հոյակապ լեզուն, ո՛չ մեր հին շքեղ արուեստը, ո՛չ մեր պատմութեան կրպօք մը փառաւոր էջերը: Ո՛չ. ժամանակաւոր անմահն, խոնջեցիկ, ջղաքարութեան շրջանի մը մէջ ննք, շատ բացատրելի՝ 15-20 տարուան հակայ պայքարով, մեր աւժերէն շատ վեր պայքար մը, որուն մէջ ոչ միայն նկատաւէս, այլ և բարոյապէս շատ արիւն կորսնցողներ մննք: Բուժութեան համար այս սպառնիչ տկարութիւնէն, մենք պէտք ունինք ամէն բանէ առաջ բարոյական դարմանումի մը ինքզինքնիս ներթափելու. պէտք է որ — ասիկա կը կրկնեմ քառսըբորդ անգամ ըլլալով, — մեր իւրաքանչիւր

կուսակցութիւնը, իւրաքանչիւր անհատը՝ ամէն անգամ որ ազգին ընդհանուր հիմնական շահերը ինքզոյր առարկայ են, ազգային մեծ եսը իր մասնաւոր եւէն առաջ դնել գիտնայ: Ասով է որ մեծ ազգերը մեծ եղած են: Այս ազգին պէտք է որ մենք ներմուծենք, տարածենք մեր մէջ: Ահա միակ դեղը մեր ցաւին:

Երբ ազգը շատ ձգնաժամներէ յաղդած է ելլել ողջ և առողջ, ես կը յուսամ որ այս ներքին ձգնաժամին ալ պիտի կարենայ յաղթել: Ամէն անոնք որ հայ ցեղին պատիւն ու ապագան ամէն բանէ վեր կը դասեն, պարտք ունին ընել ինչ որ կրնան՝ ծայրայեղ կրքերը հանդարտեցնելու և էական հարցերու մէջ այլ և այլ հակամարտ տարրերու միջև համերաշխութիւն մը գոյացնելու համար:

26 Յունուար, 1911

Ա. ՁՊԱՆԵՐՆ

Յ. Գ. — Վերջին պահուն, թերթը մամուլի տակ գրուելու լուպին, Պոլսոյ թերթներէն կ'իմանամ թէ երկու ընդդիմամարտ կուսակցութեանց միջև համերաշխութիւն գոյացեր է, որով Ազգային ժողովը պիտի կարենայ վերսկսել իր խնդիրներու պաշտօնակարութիւնը և 3-4 ամէն ի վեր թուրքիոյ Հայութիւնը խեղդող ծանր մշտականորէ պիտի սկսի տեղի տալ ազգային կեանքի կանոնաւոր մարդավարի բնաշրջութեան մը: Բառ չեմ գտներ յայտնելու համար զգացած ուրախութիւնս: Երազիրներուն մէջ՝ երկնքէն ոգին մը կամ հընշտակի մը Պոլիս եկած ըլլալուն խօսքը չկայ. բայց որովհետեւ այդ հրաշալիպատում էականը անտես են ընդհանրապէս, ապացուցած չէ թէ 'դժոխային կացութեան մը այս յանկարծական բերկրաւթիթ բարեփոխումը յառաջ բերելու նպատակ չըլլան այդ աներևույթ սյցնաւորներէն մէկ քանին. առանց ատոր — ինչքան ալ յայտնի ըլլայ պատուական դերը զոր այս համերաշխութիւնը գոյացնելու համար կատարին են քանի մը աշխուհ և ամէն շնորհակալութեան արժանի Հայ անձնաւորներէն — բաւական գեղարուք բացատրել այն դիւմական արագութիւնը որով երեք-չորս ամէն ի վեր ամենատարական բաներու վրայ իրար հասնալու չուզող, թերթներու և միթիւններուն մէջ դիւրար ամենէն հաշուար նախատրինքերով բարկոծող տարրեր մէկ ժողովով, երկու ժամանակ մէջ, գաղտնի գարնած, եզբայրաբար լուծած լմնուցած ըլլան անհամաձայնութեան բոլոր կնձիւները — և որ մաղթենք որ այդ բարեփոխ ոգիները, այժմ որ իրենց գործը կատարեցին Պոլսոյ մէջ, թեւեթին պարզեն դէպ ի էլմիսածին...

Le Gérant: FRÉDÉRIC MACLER.

Impr. CH. NERCÈS, 328, Rue St-Jacques — Paris.